ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և Բելառուսի Հանրապետության մշակույթի նախարարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Բելառուսի Հանրապետության մշակույթի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը,

ցանկանալով զարգացնել մշակույթի բնագավառում համագործակցությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կզարգացնեն մշակույթի բնագավառում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համագործակցությունը, մասնավորապես, կխրախուսեն.

թատերական, երաժշտական և ազգագրական խմբերի, ինչպես նաև անհատ կատարողների փոխանակումները,

կինոմատոգրաֆիայի բնագավառում համագործակցությունը, մասնավորապես, ֆիլմերի փոխանակումները և համատեղ կինոարտադրությունը,

մասնակցությունը մյուս Կողմի կազմակերպած միջազգային փառատոներին,

գեղարվեստական ցուցահանդեսների և ժողովրդական արվեստի ցուցահանդեսների փոխանակումները:

Կողմերը փոխադարձաբար կանցկացնեն մշակույթի օրեր՝ Հայաստանում և Բելառուսում:

Հոդված 2

Կողմերը կխրախուսեն համագործակցությունն ու տեղեկության փոխանակումը երկու երկրների թանգարանների, գրադարանների և արխիվների միջև:

Հոդված 3

Կողմերը կկազմակերպեն մշակութային ժառանգության պահպանման հարցերով երկկողմ սեմինարներ և գիտաժողովներ՝ համապատասխան պետական և հասարակական կազմակերպությունների առանձին մասնագետների մասնակցությամբ:

Հոդված 4

Կողմերը կաջակցեն իրենց ներկայացուցիչների մասնակցությանը՝ մյուս Կողմի կազմակերպած մշակույթի հարցերին նվիրված միջազգային կոնֆերանսներին, հանդիպումներին և մրցույթներին:

Հոդված 5

Կողմերը կխրախուսեն մշակույթի գործիչների հանդիպումների անցկացումն ու փոխանակումները, գեղարվեստական կրթության բնագավառում մասնագետների և փորձի փոխանակումը, ինչպես նաև համատեղ մշակութային ծրագրերը:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանակումների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, Կողմերը կստորագրեն առանձին պայմանագրեր, որոնցում հստակեցված կլինեն միջոցառումների մանրամասներն ու ֆինանսական պայմանները:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կարող է փոփոխվել և լրացվել: Փոփոխություններն ու լրացումները կձևակերպվեն առանձին Արձանագրությունների տեսքով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր ծանուցելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը գործում է հինգ տարվա ընթացքում և ինքնաբերաբ ար կերկարաձգվի նույն ժամանակահատվածով, քանի դեռ Կողմերից որևէ մեկը դրա գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի ծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է 2003թ. հոկտեմբերի 17-ին Երևան քաղաքում, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

***Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2004 թվականի ապրիլի 21-ից:**